2. ԳԱՆՁ - հայ միջնադարյան հոգևոր երգարվեստի ժանր: Սերել է ժամագրքային հնագույն քարոզից: Սկզբնավորել է Գրիգոր Նարեկացին, ում այս ժանրի գործերի առաջին բառից («Գանձ լուսոյ...», «Գանձ բաղձալի...» ևն) նմանօրինակ երկերն անվանվել են «Գանձ»-եր: Հետագայում այն ձեռք է բերել ժանրային իմաստ, որով ստեղծագործել են հայ միջնադարի մի շարք բանաստեղծ-երաժիշտներ (Ներսես Շնորհալի, Մխիթար Այրիվանեցի և ուրիշներ, մինչև վերջին խոշոր գանձագիր Գրիգոր Խլաթեցին): Գանձը հնագույն եղանակավոր քարոզից ժառանգել է կրկնակը և վերջնամասը:

Երաժշտական առումով, Գանձն ունի վանկային կառուցվածք, սաղմոսատիպ, պարզ մեղեդի և ծավալվում է պատմողական ասերգի հունով: Գանձը ժողովրդական երգարվեստի ազդեցությամբ կրել է որոշ փոփոխություններ: Հայտնի են զուտ ծիսական, մեռելաթաղի Գանձեր, որոնք, ըստ էության, մեներգեր են՝ ոճով նման ժողովրդական ողբերին: Մեռելաթաղի որոշ Գանձեր պահպանվել են մեղեդիներով:

Գանձերն ամփոփվել են Գանձարաններում, ուշ միջնադարում՝ նաև Տաղարաններում և Մաշտոցներում:

3. ՏԱՂԱՐԱՆ - հոգևոր, հետագայում նաև աշխարհիկ բովանդակության չափածո ստեղծագործությունների (տաղ, առհասարակ՝ բանաստեղծություն) ժող. ձեռագիր մատյան կամ տպագիր գիրք: Զուտ հոգևոր երգերի Տաղարանը ընդգրկում է եկեղեցում երգվող խազագրված և նոտագրված երգեր (տե՛ս, Գանձարան, Շարակնոց), մյուսներում՝ նաև եկեղեցուց դուրս արտասանվող կամ երգվող բանաստեղծություններ: Հայ հնագույն ձեռագիր Տաղարաններ չեն պահպանվել: Առաջին Տաղարանը հրատարակվել է 1512-ին Վենետիկում, Հակոբ Մեղապարտի հիմնադրած տպարանում: Տպագրվելուն զուգընթաց կազմվել են ձեռագիր Տաղարաններ (պահպանվել են 1512-ից հետո կազմված ձեռագիր Տաղարաններ): Աշխարհիկ բովանդակության և ժողովրդական երգեր ընդգրկող պահպանված հնագույն Տաղարան կազմել է Խաչատուր Կաֆայեցին (Խաչգռուզ) 1620-58-ին Ղրիմում: Այն պահպանվել է Մատենադարանի թիվ 7709 ձեռագրում: Տաղարաններ կազմում են նաև մեր օրերում:

4. ՍԱՀԱԿ Ա ՊԱՐԹԵՎ, Իսահակ Պարթև, Մեծն Սահակ, Սուրբ Սահակ (29.09.348, Կեսարիա–07.09.439, գ. Բլուր՝ Բագրևանդ գավառ), Ամենայն հայոց կաթողիկոս 387 թ.: ՀԱԵ տոնելի սուրբ: Երկար տարիներ սովորել է Կեսարիայի, Ալեքսանդրիայի և Կ. Պոլսի դպրոցներում: Ձեռնադրվելով եպիսկոպոս՝ իր 60 աշակերտի հետ կրոնավորել է Սբ Էջմիածնի վանքում: Իր տեղապահ Մեսրոպ Մաշտոցի հետ խթանել է ազգային կրթության և լուսավորության նոր վերելքը: Հայոց նոր գրերի ստեղծումից (405-406) հետո նրա հրամանով ուսուցանվել են նոր գրերը, թարգմանվել աստվածաբանական, փիլիսոփայական, պատմական երկեր:

Սահակ Ա Պարթևը կարգավորել է հայկական Տոնացույցը, գրել բազմաթիվ կանոններ, շարականներ (նաև եղանակավորել), Պատարագամատույց, ծիսական աղոթքներ, նպաստել Աստվածաշնչի թարգմանությանը հունարենից, նաև կանոնացմանը: Սահակ Ա Պարթևը կարևոր ներդրում ունի Հայ եկեղեցու պաշտոներգության, երաժշտաձիսական գրքերի կայացման և ձևավորման մեջ: Հայ հոգևոր երգերի սկզբնավորողն է (Մեսրոպ Մաշտոցի հետ): Նրա անունով հայտնի են ժամագրքում զետեղված գիշերաժամի 4 երգեցիկ քարոզները, բազմաթիվ շարականներ՝ Ղազարի հարության, Ծաղկազարդի կանոնները, երկրորդ Ծաղկազարդի հին կանոնի երգերը և Ավագ շաբաթվա բոլոր օրերի կանոնների երգերի մեծ մասը: Գանձարաններում պահպանված է նաև նրա «Պարագրի անպարագրելի բանն» սկզբնատողով տաղը:

Սահակ Ա Պարթևին են վերագրվում հայոց եկեղեցական ձայնեղանակների՝ ութձայնի առաջին կարգավորումը:

5. ԿՈՄԻՏԱՍ Ա ԱՂՑԵՑԻ, Շինող (ծ. թ. անհայտ, գ. Աղցք (Արագածոտն գավառ) – 628, Դվին), Ամենայն հայոց կաթողիկոս 615 թվականից: Ուսումն ու կրթությունը ստացել է Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք (574-604 թթ.) Դվինում: Մի կարճ ժամանակով եղել է Ս.

Հռիփսիմե վկայարանի փակակալը, հետո, ինչպես երևում է, Աբրահամ կաթողիկոսը (607-615 թթ.), նախքան կաթողիկոս ընտրվելը, ձեռնադրել է Տարոնի եպիսկոպոս:

Նախքան կաթողիկոս ընտրվելը եղել է Տարոնի եպիսկոպոսը: Եռանդուն մասնակցություն է ունեցել ժամանակի դավանաբանական վեճերին, պաշտպանել Հայ եկեղեցու դավանանքը քաղկեդոնականների և նեստորականների ոտնձգություններից: Կոմիտասն իր մասնակցությունն է բերել եկեղեցաքաղաքական պայքարին նմանապես. նրա հանձնարարությամբ են կազմվել ինչպես «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուն, այնպես էլ «Գիրք Թղթոց»-ը: «Կնիք հաւատո» երկը 1914 թ. հրատարակել է Կարապետ եպիսկոպոսը՝ համաձայն Երևանի Մատենադարանի թիվ 4640 ձեռագրի (ԺԵ դար):

Կոմիտասի անունով մեզ են հասել երկու թուղթ: Առաջին թուղթը «Վասն հաւատոյ» (615 թ.), գրված է Պարսկաստանի եպիսկոպոսների խնդրանքով: Այն զետեղված է «Գիրք Թղթոց» ժողովածուի մեջ: Երկրորդ թուղթը (618 թ.) հղված է Երուսաղեմի տեղապահ Մողեստոս երեցին: Թղթի պատճենը զետեղված է Սեբեոսի պատմության մեջ (տե՛ս Սեբէոս «Պատմութիւն», Գլուխ ԼԶ 5-28): Այստեղ Կոմիտաս կաթողիկոսն իր ուրախությունն է հայտնում ցավալի ընդմիջումից (Երուսաղեմի 614 թ. ավերումից) հետո Հայ եկեղեցու և Երուսաղեմի միջև վերափոխված հարաբերությունների կապակցությամբ: Թուղթը շարադրված է քրիստոնեական մխիթարության դասական ավանդների փայլուն իմացությամբ, սուրբգրային վկայությունների տեղին օգտագործումով:

Ծավալել է շինարարական և հոգևոր-մշակութային գործունեություն (դրանից էլ՝ Շինող մականունը): Ավարտին է հասցրել Դվինի Սբ. Գրիգոր եկեղեցու շինարարությունը, հիմնանորոգել է Վաղարշապատի Սբ. Էջմիածին Կաթողիկեն, 618-ին կառուցել է Էջմիածնի Սբ. Հռիփսիմե վանքը (Գրիգոր Լուսավորչի հիմնած նախկին Վկայարանի տեղում), հետամուտ եղել Սյունյաց, Արշարունյաց, Դվինի կաթողիկոսարանի, Էջմիածնի վանքի, Մայրավանքի դպրոցների, Շիրակի դպրեվանքի և այլ հոգևոր-կրթական կենտրոնների զարգացմանը:

Սբ. Հռիփսիմեի տաճարի արևելյան խորշի մեջ Կոմիտաս Աղցեցին թողել է շինարարական արձանագրություն. «Քրիստոս Աստուած, յիշեա զԿոմիտաս Հայոց կաթողիկոս՝ շինող սրբոյ Հռիփսիմէի»:

Կոմիտաս Ա Աղցեցին նաև բանաստեղծ-երաժիշտ էր, հայ շարականերգության նշանավոր ներկայացուցիչներից: Հայտնի է նրա Սբ. Հռիփսիմյանց կույսերի հիշատակին նվիրված կանոնի օրհնությունը՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը: Սա, ամենայն հավանականությամբ, գրվել է նավակատիքի՝ տաճարի բացման արարողության կապակցությամբ՝ ոգեկոչելով Հռիփսիմյան կույսերի հիշատակը:

6. ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ (մոտ 605-610, գ. Շիրակավան կամ Անեանք (Շիրակի գավառ)–մոտ 686-690), գիտնական, մատենագիր, տոմարագետ, մանկավարժ, երաժշտագետ: Շիրակավանի դպրեվանքի դպրոցում սովորել է օտար լեզուներ, ճարտասանություն, գրչություն, մանրանկարչություն, Տրապիզոնում 8 տարի ուսանել է հույն գիտնական Տյուքիկոսի դպրոցում: 661-ին վերադարձել է Շիրակավան:

Անանիա Շիրակացին հայ իրականության մեջ և Մերձավոր Արևելքում ամբողջ. ներկայացրել է երաժշտ. հնչականության մասին ալեքսանդրյան գիտնականների առաջավոր ուսմունքը: Կազմել է ձայնագիտության ալեքսանդրյան «տասնակարգեան աղիւսակի» հայկական տարբերակը, որը հայ երաժշտագիտությունը հարստացրել է ձայներին, ձայնամիջոցներին և ձայնաշարերի կառուցվածքին վերաբերող նոր գաղափարներով: Նրան է վերագրվում նաև «Յաղագս գիտութեան ձայնից» գրվածքը, որը նվիրված է հայկական ութձայն համակարգի ձայնեղանակների մեկնությանը:

Հեղինակ է Հինանց ժամանակամիջոցում ԱՁ–ԴԿ 8 ծավալուն հարցնակարգերի մեծ մասի և Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերի «քաղցրալուր» շարականների: Խորապես ուսումնասիրել է հայ շարականերգության և ժամագրքի երգասացությունների հին ու ժամանակի ավանդույթները. դրանք գործածել է ստեղծագործաբար և կանխորոշել զարգացման նոր ուղիներ:

Անանիա Շիրակացու անունով Երևանում և Գյումրիում կոչվել են փողոցներ, համալսարան, սահմանվել է ՀՀ պետական մեդալ:

7. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ (951, Նարեկ, Ռշտունիք, Վասպուրականի թագավորություն – 1003, Նարեկավանք, Ռշտունիք, Վասպուրականի թագավորություն), հայ միջնադարյան հոգևորական, քրիստոնյա աստվածաբան, միստիկ բանաստեղծ, երաժիշտ և փիլիսոփա: Հայ Առաքելական եկեղեցին նրան սրբացրել է:

Գրիգոր Նարեկացին համարվում է հայ գրականության վերածնության հիմնադիր, Հայ վերածնության փիլիսոփայական մտքի գագաթը: Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններից հատկապես հայտնի է և մեծ ժողովրդականություն է վայելում «Մատյան ողբերգության» չափածո աղոթքների ժողովածուն: 2015 թվականի փետրվարին Հռոմի Ֆրանցիսկոս պապը Գրիգոր Նարեկացուն դասել է կաթոլիկ եկեղեցու ուսուցիչների շարքում:

Հնագույն ձեռագիր կենսագրականներում, բանաստեղծի ստեղծագործություններում, ինքնակենսագրական բնույթի հիշատակություններում Գրիգոր Նարեկացու կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել:

Հայտնի է, որ Գրիգոր Նարեկացին ծնվել է Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառում, Վանա լճի հարավային ափերին գտնվող Նարեկ գյուղում 951 թվականին: Նարեկացին Անձևացյաց գավառի Խոսրով Անձևացի եպիսկոպոսի որդին էր:

Մանուկ հասակից կապված էր Ռշտունյաց աշխարհի Նարեկ գյուղի վանքի հետ, որտեղ էլ եղբոր հետ կրթվում և դաստիարակվում է ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկի՝ Անանիա Նարեկացու մոտ, ով նաև Գրիգորի մոր հորեղբայրն էր: Յուրացնելով դպրոցի մատենադարանի թարգմանական և ինքնուրույն ձեռագիր կրոնափիլիսոփայական գրականությունը՝ Գրիգոր Նարեկացին հետագայում դարձել է ուսման այդ կենտրոնի այուներից մեկը:

Ուսումն ստանալուց հետո Գրիգորը նույն Նարեկա վանքում դարձել է վանական, ստացել վարդապետի աստիճան և զբաղվել մանկավարժությամբ ու գրական աշխատանքներով: Այդ ժամանակ էլ ստանում է Նարեկացի անունը: Իր հարուստ գիտելիքների և անբասիր վարքի շնորհիվ Նարեկացին շուտով մեծ համբավ է վաստակում: Նրա մասին հյուսվում են զանազան ավանդություններ, որոնց մի մասը բանավոր կամ գրական մշակմամբ մեզ է հասել:

Հայտնի է նաև, որ մեծ հռչակ վայելող Նարեկացին ունեցել է նաև թշնամիներ՝ հոգևոր դասի բարձր շրջաններից: Նա ինչ–ինչ պատճառներով մեղադրվել և հոգևոր դատարան է կանչվել: Ենթադրվում է, որ Նարեկացին հալածվել է Թոնդրակյան աղանդին պատկանելու կամ հարելու համար, այդ պատճառով գրել է մի թուղթ, որտեղ դատապարտում է թոնդրակեցիներին:

Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003 թվականին և թաղվել է Նարեկա վանքում: Նրա գերեզմանը երկար ժամանակ եղել է սրբազան ուխտատեղի՝ շրջակա հայ բնակչության համար:

8. ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՐՈՆԱՑԻ (նաև՝ **Հաղարծնեցի**, 12-րդ դար, Տարոն, Տարոնի իշխանություն, Բյուզանդական կայսրություն – 13-րդ դար, Հաղարծնի վանք, Զաքարյան Հայաստան), հայ կղերական, երաժիշտ, գիտնական և բանաստեղծ: Հաղարծնի վանահայր (12-րդ դարի վերջին քառորդ - 13-րդ դարի սկիզբ): Գործել է Զաքարյանների տիրապետության շրջանում՝ տնտեսական, քաղաքական ու մշակութային վերելքի պայմաններում: Խաչատուր Տարոնացին նոր մակարդակ է ստեղծել Հաղարծնում տարեկան երգեցողությունների միայնակ (սոլո) ու խմբային կատարման ասպարեզում, մեծապես նպաստել է խազագրության արվեստի հետագա զարգացմանը, հորինել է գանձեր ու տաղատիպ շարականներ, որոնցից երաժշտությամբ հանդերձ պահպանվել է Հայոց պատարագի մեջ մտած «Խորհուրդ խորին» ծանր ու տոնական ստեղծագործությունը: Խաչատուր Տարոնացին այն երգել է 13-րդ դարի սկզբներին, Զաքարե սպասալարի հրամանով մատուցված բացօթյա պատարագի ժամանակ (Լոռիի մոտ), հրավիրված հոգևորականների ներկայությամբ: Հայտնի է «Զգեստավորման շարական» անունով, կատարում է Պատարագի նախերգի պաշտոնը և իր վիպական հզոր շնչով, հուզականության նոր որակով ու զարդոլորումների նկարագրով կրում է ոչ միայն անհատական ստեղծագործության, այլև դարաշրջանին հատուկ մեղեդիական բարձր ճաշակի կնիքը: Աչքի է զարնում նաև դրա երկ-եռամասանի հազվագյուտ կառուցվածքը: